ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Մարտունի, Շահումյան 2,

Հեռ. 060-74-34-01

N 355

23 ապրիլի 2018թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԲՈԹՈՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Բոթոյան*

Ձեզ ենք ներկայացնում Մարտունի համայնքի ավագանու 19.04.2018թ. նիստի արձանագրությունը և որոշումները:

Առդիր՝ 6 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

կատարող
Գ. Ոսկանյան

# *ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ -7*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19-Ը ԱՊՐԻԼԻ 2018Թ. ԹԻՎ 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ*

*Նիստին մասնակցում էին համայնքի ավագանու 13 անդամներից 9-ը՝* ՎԱՐԴԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, ԱՐՏԱԿ ԳԱԼՍՏՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ԴԱՎԹՅԱՆ, ՍԵՐԳՈ ԵՂՈՅԱՆ, ԱՐՏԱԿ ՁԻՐՈՅԱՆ,ՍԵՎԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ԱՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ, ՏԻԳՐԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

*Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ա.Ավետիսյանը*

*Քարտուղարությամբ՝ Գ.Ոսկանյանի*

## *Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ*

ՀԱՐՑ-75. <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-76. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ք. ՄԱՐՏՈՒՆԻ, ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵԻ ԻՆՖԵԿՑԻՈՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՎԹԱՐԱՅԻՆ ՇԵՆՔԸ ՔԱՆԴԵԼՈՒ ԵՎ ՇԵՆՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 0,45 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ «ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-77. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՌՈՇՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԵՐԹԵՎԵԿԵԼԻ ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՈՒ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Մարտունի համայնքի ավագանին որոշեց հաստատել նիստի օրակարգը՝
Հարցը քվեարկվեց՝ կողմ՝9, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա.ԳԱԼՍՏՅԱՆ
Ռ.ԴԱՎԹՅԱՆ
Ս.ԵՂՈՅԱՆ
Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ՁԻՐՈՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 75*

*Ք. Մարտունի*

*«19»-ը ապրիլի 2018թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14[1] հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը.*

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*
*<u>ՈՐՈՇՈՒՄ Է</u>*

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծում կատարված հետևյալ փոփոխությունները.

05-003-0529-0042 ծածկագրով 0,3381 հա մակերեսով գյուղատնտեսական այլ հողերի և 05-003-0529-0044 ծածկագրով 0,1595 հա մակերեսով գյուղատնտեսական այլ հողերի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել արդյունաբերության,

ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողերի:

2.Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^{3}$ հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի «Հողերի օգտագործման սխեման (հողամասերի կատեգորիայի տրանսֆորմացիան)» գծագրին (Այսուհետ՝ Գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան:

3.Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 143 հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

| | |
|---|---|
| Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | Ա.ՁԻՐՈՅԱՆ |
| Ա.ԳԱԼՍՏՅԱՆ | Ա.ՄԵԼԻՔՅԱՆ |
| Ռ.ԴԱՎԹՅԱՆ | Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ |
| Ս.ԵՂՈՅԱՆ | Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ |
| Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 76*

*«19 »-ը ապրիլի 2018թ.* *ք. Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ք. ՄԱՐՏՈՒՆԻ, ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵԻ ԻՆՖԵԿՑԻՈՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՎԹԱՐԱՅԻՆ ՇԵՆՔԸ ՔԱՆԴԵԼՈՒ ԵՎ ՇԵՆՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 0,45 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ «ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 14.01.2010 թ. թիվ 07 –Ա որոշումը, նկատի ունենալով, որ ՀՀ Կառավարության 14.01.2010թ. թիվ 07 –Ա որոշմամբ ինֆեկցիոն բաժանմունքը իր սպասարկման տարածքով նվիրաբերվել է Մարտունու համայնքապետարանի շախմատի դպրոց կառուցելու համար, սակայն ուսումնասիրությունից պարզվել է, որ շենքը գտնվում է վթարային վիճակում և ենթակա չէ շահագործման, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.

<u>*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*</u>
<u>*ՈՐՈՇՈՒՄ Է*</u>

1.Համաձայնություն տալ ինֆեկցիոն բաժանմունքի վթարային շենքը քանդելու և օգտագործման համար ոչ պիտանի շինանյութը հատկացնել դրա կարիքն ունեցող քաղաքացիներին և համայնքապետարանի ենթակայության ՀՈԱԿ-ներին:

2. Համաձայնություն տալ ք. Մարտունի, Գետափնյա փողոց թիվ 1 հասցեի նախկին ինֆեկցիոն շենքի սպասարկման 0,045 հա տարածքը անհատույց հետ վերադարձնելու «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը նոր բժշկական կենտրոն կառուցելու համար։

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝9, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա.ԳԱԼՍՏՅԱՆ
Ռ.ԴԱՎԹՅԱՆ
Ս.ԵՂՈՅԱՆ
Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա.ՋԻՐՈՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 77*

*« 19 »-ը ապրիլի 2018թ.* *Ք.Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՈՌՇՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԵՐԹԵՎԵԿԵԼԻ ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՈՒ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով.*

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*
*<u>ՈՐՈՇՈՒՄ Է</u>*

Համաձայնություն տալ Մարտունի համայնքի Պոռշյան փողոցի երթևեկելի հատվածի վերանորոգման ու ասֆալտապատման ծրագիրն իրականացնելու և այդ նպատակով ՀՀ պետական բյուջեից սուբվենցիա ստանալու համար:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա.ԳԱԼՍՏՅԱՆ
Ռ.ԴԱՎԹՅԱՆ
Ս.ԵՂՈՅԱՆ
Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԶԻՐՈՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ